ՈՉ ՖՈՐՄԱԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ի հետ համատեղ:

Ծրագիրը մեկնարկել է 2023թ. -ի մարտից և ընդհանուր նպատակն է խթանել երիտասարդների մասնակցությունը կրթության, քաղաքացիական հասարակության և քաղաքականության մեջ: Ծրագրի հատուկ նպատակն է հզորացնել և կրթել երիտասարդներին և երիտասարդական ՀԿ-ներին՝ խրախուսելով նրանց ակտիվ մասնակցությունը Հայաստանի քաղաքացիական և հասարակական կյանքում:

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

<u>Ովքեր կարող են դիմել.</u>

«Ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության նորարարական գործիքների մշակման» ենթադրամաշնորհային մրցույթը նախատեսված է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և անկախ փորձագետների համար, որոնք ունեն քաղաքացիական կրթության գործիքների մշակման փորձառություն և նպատակաուղղված են ստեղծելու նորարարական գործիքներ՝ երիտասարդների քաղաքացիական ակտիվության խթանման և առաջնորդական հմտությունների զարգացման նպատակով:

Մրցույթի նպատակները և ակնկալվող արդյունքները.

Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը հրավիրում է ոլորտում փորձառություն ունեցող ՔՀԿ-ներին և անհատ փորձագետներին ներկայացնելու ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության նորարարական գործիքների մշակման նախագծային առաջարկներ՝ ուղղված երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանը և նրանց առաջնորդական հմտությունների զարգացմանը: Ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության նորարական գործիքների օրինակներ են՝ ձեռնարկներ, ուղեցույցներ, կրթական մոդուլներ (վարժանքներ, կամ խաղեր՝ սեղանի, սիմուլացիոն, թվային), հավելվածներ և այլն:

Մրցույթի նպատակներն են.

- Երիտասարդների զորեղացում. նպաստել երիտասարդների զորեղացմանը՝ նրանց քաղաքացիական մասնակցությունը խթանող գործիքների մշակման միջոցով:
- Երիտասարդների առաջնորդության որակների զարգացում. խթանել երիտասարդների առաջնորդական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ իրենց համայնքներում որոշումներ կայացնելու և նախաձեռնություններ իրականացնելու նպատակով համապատասխան գործիքների մշակման միջոցով: Հատուկ ուշադրություն դարձնել կանանց առաջնորդական հմտությունների զարգացմանը և նրանց հավասար մասնակցությանը:
- Երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ շրջանակի զարգացում. նպաստել երիտասարդական աշխատանքի ինստիտուտի և երիտասարդական աշխատողների մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Նշված նպատակներին հետևելով՝ փորձագետները և ՔՀԿ-ները հրավիրվում են ներկայացնելու ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության գործիքների մշակման նախագծային առաջարկներ, որոնք կարող են ներառել ներքոնշյալ ուղղությունները՝ չսահմանափակվելով դրանցով: Առաջարկվող ուղղությունների համար հիմք է հանդիսացել «Հայաստանում ոչ ֆորմալ ուսուցման և քաղաքացիական կրթության գործիքներ, պրակտիկաներ» ուսումնասիրությունը, որն իրականացվել է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ի կողմից «Երիտասարդները գործելիս» ծրագրի շրջանակներում՝ բացահայտելու Հայաստանում երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ու առաջնորդության հմտությունների զարգացմանն ուղղված գործիքների կիրառման բացերը, թերությունները և հնարավորությունները: Ուսումնասիրությանը կարող եք ծանոթանալ այստեղ:

1. **Դեռահասների և երիտասարդների համար՝**

- Երիտասարդների տոկունության, դիմակայունության (resilience) զարգացումն ապահովող կրթական մոդուլներ, խաղեր (սեղանի, սիմուլացիոն, թվային):
- Երիտասարդների կողմից որոշումների կայացման, պատասխանատվության ստանձման, առաջնորդական կարողությունների զարգացումն ապահովող կրթական մոդուլներ, խաղեր (սեղանի, սիմուլացիոն, թվային):

- Քաղաքական, քաղաքացիական մասնակցության հմտությունները [1] գործնականում զարգացնող քաղաքական դպրոցների մոդելներ, ճամբարների, ֆորում թատրոնների, կրթական ծրագրերի մոդուլներ, խաղեր (սեղանի, սիմուլացիոն, թվային)։

2. **Երիտասարդական աշխատանքի կայացման համար՝**

- Երիտասարդական աշխատողի մասնագիտական կարողունակությունների ազգային շրջանակ և կարողությունների (ինքնա)գնահատման գործիք (որպես օրինակ կարող է դիտարկվել եվրոպական երիտասարդական աշխատանքում կիրառվող տարբերակը՝ https://www.coe.int/en/web/youth-portfolio/youth-work-competence: Ընդունելի են նաև լրիվ անկախ այլընտրանքային գաղափարները)։
- Երիտասարդական կենտրոնների որակի գնահատման գործիք (որպես օրինակ կարող է դիտարկվել ԵՄ-ում ընդունված Որակի պիտակի չափորոշիչների ու տրման ընթացակարգը՝ https://www.coe.int/en/web/youth/quality-label-for-youth-centres: Ընդունելի են նաև լրիվ անկախ այլընտրանքային գաղափարները)։

3. **Երիտասարդական ՔՀԿ-ների կարողությունների զարգացման համար՝**

- Ռազմավարական պլանավորման ու կառավարման օրինակելի մոդելներ։
- Ճգնաժամային կառավարման, արտակարգ իրավիճակներում գործելու օրինակելի մոդելներ։
- Արագ արձագանքման և առաջնային աջակցության համակարգերի օրինակելի մոդելներ։
- Ճգնաժամային իրավիճակներին պատրաստվելու վարժանքների, ուսուցողական ծրագրերի մոդուլներ։

Վերոնշյալներից բացի գնահատող հանձնաժողովը ողջունում և խրախուսում է Մրցույթի նպատակներին համապատասխանող այլ գործիքների մշակման վերաբերյալ նախագծային առաջարկները։

Ենթադրամաշնորհի չափը և նախագծի տևողությունը.

Ներկայացվող նախագիծը պետք է իրականացնել 3-5 ամիսների ընթացքում՝ 2024թ-ի մայիս-սեպտեմբեր ամիսներին։ Ներկայացվող նախագծի բյուջեն կարող է լինել մինչև 2,185,000 ՀՀ դրամ։

Ինչպես դիմել մրցույթին.

Ենթադրամաշնորհային մրցույթին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

[1] Մասնակցության ձևերին կարելի է ծանոթանալ «Հայաստանում ոչ ֆորմալ ուսուցման և քաղաքացիական կրթության գործիքների, պրակտիկաների ուսումնասիրություն» զեկույցի էջ 22-ում, ինչը հնարավորություն կտա հասկանալ, թե այդ ձևերի համար ինչ հմտություններ են պետք։

- Հայտադիմում (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- Բյուջե (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- Գրանցման վկայական (կազմակերպությունների դեպքում)
- Երաշխավորագիր / Declaration on honour (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- Կանոնադրություն (կազմակերպությունների դեպքում)

Վերոնշյալ փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում հայտը չի կարող դիտարկվել: Ենթադրամաշնորհային մրցույթին դիմելու վերջնաժամկետը **2024թ-ի ապրիլի 25-ն է**: Հայտադիմումը անհրաժեշտ է ուղարկել anna.mkrtchyan@kas.de էլ. հասցեին: Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել նույն էլ. հասցեով, կամ զանգահարել +37412545116 հեռախոսահամարով:

ՆՇՈՒՄ

- **Ձեռագիր հայտերը չեն ընդունվելու:**
- **Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը չեն դիտարկվելու:**
- **Հայտադիմումները կարող են ներկայացվել հայերեն կամ անգլերեն:**
- **Տրամադրված տեղեկատվությունը կիրառվելու է բացառապես հայտերի դիտարակման համար և ենթակա չէ տարածման:**
- **Եթե հայտատուն հայտն ուղարկելուն հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում չի ստանում պատասխան նամակ հայտը ստանալու վերաբերյալ, խնդրում ենք գրել հետևյալ էլ. հասցեին՝ anna.mkrtchyan@kas.de, կամ զանգահարել +37412 545116 հեռախոսահամարով:**

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Ենթադրամաշնորհային մրցույթի շրջանակում ներկայացված հայտերը կուսումնասիրվեն և կգնահատվեն ծրագրի ընտրական հանձնաժողովի կողմից՝ մրցույթի վերջնաժամկետին հաջորդող երկշաբաթյա ժամկետում: Մրցույթի նպատակներից ելնելով՝ առավել մրցակցային կլինեն այն նախագծային առաջարկները, որոնք կցուցաբերեն նորարարական մոտեցում և կստեղծեն հավելյալ արժեք՝ ոլորտում արդեն առկա գործիքների հետ համեմատության համատեքստում: Ստորև կարող եք ծանոթանալ հայտերի գնահատման չափանիշների աղյուսակին:

1.	**Գործառնական կարողություններ (առավելագույնը՝ 20 միավոր)**
-	Հայտատուի քաղաքացիական կրթության գործիքների մշակման կարողությունը: (առավելագույնը՝ 6 միավոր)
-	Հայտատուի կարողությունները՝ հասնելու ծրագրով նախատեսված արդյունքներին: (առավելագույնը՝ 7 միավոր)
-	Հայտատուի ոլորտային ներգրավվածությունը և առաջադրած խնդիրներին իրազեկվածությունը: (առավելագույնը՝ 7 միավոր)
2.	**Համապատասխանություն (առավելագույնը՝ 20 միավոր)**
-	Որքանո՞վ է նախագծի գաղափարը համապատասխանում մրցույթի նպատակներին. արդյո՞ք նախագծի ակնկալվող արդյունքները համահունչ են դիմորդների համար ուղեցույցում սահմանված նպատակներին: Նախագիծն ունի՞ չափելի նպատակներ և նորարարական մոտեցում: (առավելագույնը՝ 10 միավոր)
-	Արդյո՞ք նախագիծը պարունակում է որոշակի հավելյալ արժեքի տարրեր երիտասարդների զորեղացման և քաղաքացիական կրթության զարգացման համար (օրինակ՝ նորարարություն, լավագույն փորձ և այլն): (առավելագույնը՝ 10 միավոր)
3.	**Դիզայն և իրականացում (առավելագույնը՝ 25 միավոր)**
-	Որքանո՞վ է համահունչ նախագծի դիզայնը: Արդյո՞ք առաջարկվող գործողությունները տեղին են, գործնական և համահունչ նախատեսվող արդյունքներին: (առավելագույնը՝ 10 միավոր)
-	Ժամանակացույցի իրատեսականությունը: (առավելագույնը՝ 5 միավոր)
-	Որքանո՞վ է նախագծի միջամտությունը նպաստում թիրախային խմբերի կարողությունների զարգացմանը: (առավելագույնը՝ 10 միավոր)
4.	**Կայունություն (առավելագույնը՝ 15 միավոր)**

- Արդյո՞ք մշակված գործիքը կկիրառվի և շոշափելի ազդեցություն կունենա իր թիրախային խմբերի վրա: (առավելագույնը՝ 10 միավոր) - Արդյո՞ք նախագծի արդյունքները համարժեք կխթանվեն ավելի լայն դրական ազդեցություն ստեղծելու համար: (առավելագույնը՝ 5 միավոր)
5. Բյուջեն և ծախսարդյունավետությունը (առավելագույնը՝ 20 միավոր)
- Գործողությունները պատշաճ կերպով արտացոլվա՞ծ են բյուջեում: (առավելագույնը՝ 10 միավոր) - Արդյո՞ք նախագիծն ունի ողջամիտ գնով արդյունք տալու կարողություն: (առավելագույնը՝ 10 միավոր)

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ընդհանուր դրույթներ.

- Ենթադրամաշնորհ ստանալուց հետո ենթադրամաշնորհառուն ստանձնում է նախագծի ամբողջական պատասխանատվությունը, մասնավորապես՝ նախագծի և ֆինանսների կառավարումը:
- Ծրագրի տեսանելիությունն ապահովելու համար, ենթադրամաշնորհառուները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիրը հանրայնացնելու համար՝ համաձայն Հիմնադրամի կողմից տրամադրվող «Հաղորդակցության և տեսանելիության» ուղեցույցի:
- Նախքան նախագծի սկզբնական պլանում որևէ փոփոխություն կատարելը, ենթադրամաշնորհառուն պետք է խորհրդակցի և հաստատում ստանա Հիմնադրամի կողմից:
- Ենթադրամաշնորհառուն պետք է երաշխավորի նախագծի իրականացման ընթացքում առաջացած ֆինանսական միջոցների պակասի դեպքում վերջինիս ավարտին հասցնելը:
- Եթե ենթադրամաշնորհառուն նախագծի իրականացման ընթացքում չի կատարում ենթադրամաշնորհի նախնական պլանի համաձայն ստանձնած պարտավորությունները, Հիմնադրամը իրավունք ունի պահանջելու ենթադրամաշնորհի գումարի մի մասի կամ ամբողջ չափի փոխհատուցում:
- Ենթադրամաշնորհի մեկ հայտարարության ներքո հայտատուն կարող է ներկայացնել ֆինանսավորման համար նախագիծ միայն մեկ անգամ:
- Ենթադրամաշնորհային նախագծերի բովանդակային և մշտադիտարկման ուղղություններով ենթադրամաշնորհառու կազմակերպությունների և անհատ փորձագետների հետ աշխատելու է նաև Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ը՝ Հիմնադրամի հետ միասին:

Վճարում և փոխհատուցում.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ.-ի սեպտեմբերի 23-ի Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Հանձնաժողովի միջև կնքված Շրջանակային Համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին N 1112-Ն որոշման համաձայն՝ «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիրը ազատված է ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ):
- Մինչ ենթադրամաշնորհը հաշվին փոխանցելը, ենթադրամաշնորհառուն Ստացողի անունով պետք է բացի նոր բանկային հաշիվ/ենթահաշիվ (ՀՀ դրամով), որը նախատեսված կլինի ծրագրի համար:
- Նախագծի ավարտից հետո ենթադրամաշնորհառուն պետք է վերադարձնի ենթադրամաշնորհի մնացորդը Հիմնադրամին՝ համաձայն պայմանագրում նշված կետի:

Հաշվետվողականություն.

- Ենթադրամաշնորհառուն պետք է հաշվետվություններ (պատմողական և ֆինանսական) ներկայացնի նախագծի իրականացման վերաբերյալ ենթադրամաշնորհային պայմանագրում նշված հաճախականությամբ՝ համաձայն Հիմնադրամի կողմից տրամադրվող ձևանմուշների: Նախագիծը ավարտուն կհամարվի, երբ վերջնական պրոդուկտը (նորարարական գործիքը) հաջողությամբ կներկայացվի Հիմնադրամին:
- Հիմնադրամը և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ը կարող են այցելություններ իրականացնել ֆինանսավորում ստացած նախագծի կազմակերպությանը և պետք է նախապես տեղեկացված լինեն իրականացվող միջոցառումների մասին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Ֆինանսական բաշխվածություն.

Ծրագրի ուղղվածությունը փափուկ բաղադրիչների իրականացումն է, ուստի ֆինանսական միջոցները հիմնականում պետք է ուղղված լինեն նախագծի բովանդակային գործողությունների իրականացմանը:

Ընդունելի ծախսեր.

Ենթադրամաշնորհի գումարը կարող է ծախսվել միայն նախագծի գործողություններին վերաբերող ծախսերի համար: Ստորև ներկայացված են ընդունելի և բացառվող ուղղությունները բյուջեն ծախսելու համար:

<u>Ընդունելի ծախսեր</u>

- Նախագծի գործողությունների իրականացման համար պատասխանատու փորձագետների հոնորարի վճարներ
- Նախագծի գործողությունների իրականացման համար նախատեսված ուղիղ ծախսեր

<u>Բացառվող ծախսեր</u>

- Պարտքեր և պարտքի սպասարկման վճարներ (տոկոսներ)
- Կորուստների կամ հնարավոր գումարային պարտավորությունները
- Եվրոպական միության մեկ այլ դրամաշնորհի շրջանակներում ֆինանսավորում ստացած կազմակերպության կամ անհատի գումարի տրամադրում տվյալ ծրագրի ծախսերն իրականացնելու համար
- Հարկեր և տուրքեր, ներառյալ ԱԱՀ-ն, բացառությամբ այն դեպքերի, երբ չեն վերականգնվում համապատասխան ազգային հարկային օրենսդրության համաձայն
- Վարկեր երրորդ անձի
- Դատավարության տույժեր և ծախսեր

Ֆինանսական փոխանցումներն իրականացվելու են ըստ ենթադրամաշնորհառուի հետ կնքված Պայմանագրում նշված բաշխման սկզբունքի:

ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Երիտասարդական աշխատանք - Երիտասարդական աշխատանքը ընտանիքից, աշխատանքից և ֆորմալ կրթությունից դուրս երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության ձևավորման գործիք է, որը ենթադրում է աշխատանք երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ՝ ուղղված երիտասարդների կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երիտասարդների մասնակցության ապահովմանը և որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Երիտասարդական աշխատանքի ինստիտուտ - բոլոր մակարդակներում երիտասարդական աշխատանքի ճանաչման, երիտասարդական աշխատանքի, երիտասարդական կենտրոնների, ծառայությունների ու ծրագրերի որակի չափանիշների ու գնահատման գործիքակազմի, երիտասարդական աշխատողի կարգավիճակի, մասնագիտական չափորոշիչների, գործառույթների, վարքագծի նորմերի, նրանց պատրաստման, վերապատրաստման, հավաստագրման, վարձատրման, ոլորտի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ու բաշխման, ոլորտի ֆինանսավորման, ոլորտային դերակատարների համագործակցության առկա պրակտիկաների, իրավական հիմքերի, համակարգերի և մեխանիզմների ամբողջությունը:

Երիտասարդական աշխատող - երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ աշխատանք իրականացնող անձ, որի գործառույթներից է նպաստել երիտասարդների անհատական, սոցիալական, կրթական աճին, բացահայտել և զարգացնել նրանց ներուժը, ձևավորել երիտասարդների նախասիրությունների և հետաքրքրությունների իրացման համար նպաստավոր միջավայր, խթանել հանրային կյանքին երիտասարդների մասնակցությունը: Երիտասարդական աշխատողն իրազեկ է երիտասարդների իրական կյանքին, նրա տեղական պայմաններին, կարող է գնահատել իրավիճակը և երիտասարդների կարիքները, ընտրել ու կիրառել աշխատանքի համապատասխան մեթոդներ, իրականացնել կատարվող աշխատանքի ազդեցության վերլուծություն: Երիտասարդական աշխատողն աշխատում է երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ և նրանց համար, մշակում, իրականացնում և գնահատում է երիտասարդական ծրագրեր և նախագծեր, համագործակցում է տարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, խմբերի և կազմակերպությունների հետ: